ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018Թ-Ի ՄԱՅԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանի գործունեության ամփոփ հաշվետվություն

Նախարար Սուրեն Պապիկյանի հանձնարարականով նախարարության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որը զբաղվում է քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրման, բարձրացված խնդիրներին արագ արձագանքման և վերջիններիս օպերատիվ լուծումներ տալու հարցերով: Մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից պատասխանվել է շուրջ 1500 դիմումների:

Պաշտոնավարման սկզբից հանգստյան օրերին նախարարը ճանաչողական և աշխատանքային այցեր է իրականացրել հանրապետության համայնքներ, որոնց շրջանակներում շրջայցեր է կատարել Արմավիրի, Արարատի, Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերի համայնքներում, տեղում ծանոթացել համայնքային խնդիրներին, քննարկել դրանք համայնքապետերի հետ: Այցերի ընթացքում հանդիպումներ է ունեցել համայնքների բնակիչների հետ, առանձնահատուկ ուշադրության են արժանացել սահմանապահ համայնքների խնդիրներն ու բնակիչների կարիքները:

Հունիսի 19-ից նախարարի նախաձեռնությամբ մեկնարկել են երկշաբաթյա պարբերականությամբ աշխատանքային խորհրդակցություններ ՀՀ մարզպետների հետ:

Հուլիսի 8-ին նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի հայերի միության կողմից կազմակերպված ՀՀ սահմանամերձ համայնքների զարգացման ու ամրապնդման հիմնախնդիրների լուծմանը նվիրված գործարար համաժողովին:

Հուլիսի 27-ին նախարար Սուրեն Պապիկյանի նախաձեռնությամբ Սյունիքի մարզի Գորիս համայնքում արցախցի գործընկերների համար կազմակերպվել է «ՀՀ վարչատարածքային բարեփոխումներ. ձեռքբերումներ և անելիքներ» թեմայով շնորհանդես-քննարկում:

Նախարարի հանձնարարությամբ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը նախաձեռնել է ներդրումային առցանց տեղեկատվական հարթակի ու համայնքների անձնագրերի կազմման գործընթաց:

Վարչապետի հանձնարարականով նախարարը պարբերաբար այցելում է ՀՀ տարածքում գտնվող ջրամբարներ՝ ՀՀ ջրային ռեսուրսների հետագա օգտագործման արդյունավետ ուղիներ գտնելու նպատակով: Մինչ օրս նախարարն այցելել է Արագածոտնի և Կոտայքի մարզի մի շարք ջրամբարներ, որոնց թվում Ապարան, Մարմարիկ, Սևաբերդ ,Գիլանի ջրամբարներ:

Պաշտոնավարման ընթացքում նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ-ում ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիայի, Իրանի, Ճապոնիայի, Իրանի, Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպանների, Մեծ Բրիտանիայի գործարար պատվիրակության, Եվրոպայի Խորհրդի գրասենյակի ղեկավարի, ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավարի հետ: Հանդիպումներ և ոլորտային քննարկումներ են տեղի ունեցել միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների պատվիրակությունների հետ, որոնց թվում՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, USAID-ի, Save the Children-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի, Ասիական զարգացման բանկի, World Vision-ի հայաստանյան պատվիրակությունների հետ:

Նոյեմբերի 6-8-ը նախարար Սուրեն Պապիկյանը կմեկնի Ստրասբուրգ՝ մասնակցելու Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 35-րդ նստաշրջանին:

Տարածքային կառավարման և զարգացման ոլորտի ընթացիկ և նախատեսվող ծրագրերի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակ- Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովում ընդգրկվել է տարածքային կառավարման և զարգացման նախարարը: Միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ մարզպետարաններին հատկացվել է 52,500.0 հազ. դրամ, մշակվել է մարզերում միջոցառումների իրականացման ժամանակացույց: Տոնական միջոցառումների շրջանակում այցելություններ են իրականցվել Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերին նվիրված հուշահամալիրներ, Հայաստանի Հանրապետության բոլոր մարզկենտրոններում տեղի են ունեցել տոնական համերգներ և հրավառություններ: Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից համակարգվել են միջոցառումների նախապատրաստման, տոնական ձևավորման, մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև միջոցառման իրականացման վայրերի աղբահանության և բարեկարգման աշխատանքները:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողով- 2018թ. հունիսի 29-ին Երևանում Երևանում անցկացվեց հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովը՝ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակում» խորագրով: Միջոցառման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսական արդյունաբերության, տրանսպորտի, զբոսաշրջության, հումանիտար համագործակցության ոլորտներում զարգացող թվային տնտեսության պայմաններում երկու երկրների տարածաշրջանների առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը:

Ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև միջտարածաշրջանային համագործակցության ծրագրի 2018-2021թթ. իրականացման միջոցառումների ծրագիրը: Համաձայնագիր է ստորագրվել նաև տեղեկատվական անվտանգության ոլորտում Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և ռուսական Այ Բի խմբի միջև փոխգործակցության վերաբերյալ:

Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի ղեկավարությամբ ձևավորված աշխատանքային խմբում «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրի քննարկման արդյունքում ՀՀ կառավարության՝ սեպտեմբերի 14-ի նիստում հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը: Նախագծի համաձայն՝ երիտասարդ ընտանիքները կկարողանան 10% կանխավճարով և ապահովագրական գործիքի համադրմամբ ձեռք բերել 25-30 մլն. ՀՀ դրամ արժեքով բնակարաններ: Երիտասարդ ամուսինների գումարային տարիք սահմանվեց 70-ը (65 փոխարեն):

Փորձի փոխանակում Արցախի հանրապետության գործընկերների հետ- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանի նախաձեռնությամբ Սյունիքի մարզի Գորիս համայնքում արցախցի գործընկերների համար այսօր կազմակերպվել է «ՀՀ վարչատարածքային բարեփոխումներ. ձեռքբերումներ և անելիքներ» թեմայով շնորհանդես-քննարկում, որին մասնակցել են Արցախի Հանրապետության պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, ԱՀ գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը, Արցախի հանրապետության ԱԺ պատգամավորներ, ՏԿԶ նախարարության, Սունիքի մարզպետարանի, Հայաստանի և Արցախի տարբեր համայքների և վարչական շրջանների պաշտոնատար անձինք: ՀՀ ՏԿԶ նախարարության ոլորտային պատասխանատուները Գորիս և Տեղ բազմաբնակավայր համայքների օրինակով արցախցի գործընկերներին ծանոթացրել են խոշորացված համայքներում միջազգային կառույցների աջակցությամբ իրականացվող տարաբնույթ ծրագրերին, որոնց արդյունքում ձևավորվում են տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման նախադրյալներ: Անդրադառնալով վարչատարածքային բարեփոխումների արդյունքում տարածքային կառավարման եռաստիճան համակարգից երկաստիճանի անցնելու ճանապարհին ի հայտ եկած դժվարություններին և բացթողումներին՝ Սուրեն Պապիկյանը նշել է, որ դրանց արդյունքում արձանագրվել են կարևոր ձեռքբերումներ ու դրական արդյունքներ, որոնցով անհրաժեշտ է կիսվել Արցախի գործընկերների հետ

«Մաքուր տուն, տնից դուրս» համապետական շաբաթօրյակ- Սեպտեմբերի 8-ի համապետական հինգերորդ շաբաթօրյակի աշխատանքներին ՀՀ մարզերի համայնքներում ընդհանուր առմամբ ներգրավվել է շուրջ 3 512 կազմակերպություն, շուրջ 1459 միավոր տեխնիկա, այդ թվում՝ 712 մասնագիտացված աղբահանության և բեռնատար մեքենա, 362 ինքնաթափ, 404 տրակտոր, 166 ամբարձիչ, 67 էքսկավատոր,

10 գրեյդեր, 15 ջրցան մեքենա: Շաբաթօրյակի ընթացքում փակվել և մաքրվել է շուրջ 171 աղբանոց և աղբակույտ, այդ թվում՝ 61 աղբանոց և 110 աղբակույտ:

Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում- ՀՀ Կոտայքի մարզում կազմակերպվել է ՀՀ մարզերից, Երևանից, Արցախի Հանրապետությունից և Ջավախքից զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան 4800 երեխաների ամառային հանգիստը՝ երեք հերթափոխով, 20-ական օրով:

Մարզերում ներդրումների ներգրավում- Տավուշի մարզի զարգացման և, առավելապես, սահմանամերձ ու սահմանապահ համայնքներում տնտեսական կյանքն աշխուժացնելու, առավել գրավիչ գործարար միջավայր ստեղծելու ու ներդրումներ ապահովելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Տավուշի մարզպետարանի նախաձեռնությամբ ս/թ սեպտեմբերի 9-ին ՀՀ Տավուշի մարզպետարանում կազմակերպվեց «Իմ քայլը հանուն Տավուշի» ներդրումային համաժողովը, որին մասնակցում էին ծագումով մարզից սերած արտերկրում ու Հայաստանում ապրող գործարարներ: Համաժողովին մասնակցող արտասահմանում և ՀՀ-ում բնակվող տավուշցի մի շարք գործարարներ ներկայացրել են տարբեր ոլորտներում բիզնես ծրագրերի առաջարկներ՝ ելակի արտադրություն, ինտենսիվ գյուղատնտեսություն, շինանյութերի արտադրություն և այլն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ծրագրերը վերջնական տեսքի կբերվեն և կներկայացվեն համապատասխան գերատեսչություններ և առաջիկայում նման համաժողովներ կկազմակերպվեն ՀՀ բոլոր մարզերում:

ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐ

Օրենսդրական նախաձեռնություններ. **«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք**- «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումներով:

Մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի բացակայությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել մշակելու և շրջանառության մեջ դնելու վերը նշված օրենքի նախագիծը:

Մարզերում պետական կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորել են ՀՀ Նախագահի 06.05.1997 թ-ի N ՀՕ-728 հրամանագրով, որը ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու

են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այս իրավիճակում խնդիր է առաջացել օրենքով նկարագրել մարզպետներին վերապահված լիազորությունները:

Գործող օրենսդրության մեջ մարզպետարանները պետական կառավարման համակարգում նկարագրված չեն, թեպետ մարզպետարաններում իրականացվում է պետական ծառայություն և նրանք պետական կառավարման համակարգի անբաժանելի մասն են կազմում:Նախագծով առաջարկվում է մարզպետարանները նախատեսել որպես ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ենթակա մարմիններ:

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմում՝ «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Վարչական վերահսկողություն- «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ 2018 թվականի ընթացքում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն շուրջ 150 համայնքներում: Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ մարզպետների կողմից իրականացված աշխատանքների նկատմամբ:

Ճանապարհաշինություն- Միջպետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերանորոգման նպատակով նախատեսվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը հատկացնել 2 մլրդ 222 միլիոն դրամ:

ԱԳԼՃԿ-ներին կից կառուցված հանրային զուգարաններ- ՀՀ տուրիզիմի զարգացման նպատակով խնդիր էր դրվել ուսումնասիրել ՀՀ միջպետական և հանրապետական ավտոճանապարհներին տեղակայված ԱԳԼՃԿ-ների կից կառուցված հանրային զուգարանները: Ի սկզբանե ուսումնասիրության առարկա էր դարձել միջպետական և հանրապետական ավտոճանապարհների տեղակայված հանրային զուգարանները և նրանց հեռավորությունը միմյանցից: Այդ կապակցությամբ մարզպետներին հանձնարարական տրվեց՝ ուսումնասիրելու մարզի տարածքով անցնող միջպետական ու հանրապետական նշանակության ճանապարհները և ներկայացնել առաջարկություն զբոսաշրջիկներին սպասարկման համար 20-30 կմ հեռավորության սահմաններում հանրային զուգարանների տեղակայման (կառուցման, վերակառուցման կամ բարելավման) վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ միջպետական և հանրապետական ավտոճանապարհների տեղակայված ԱԳԼՃԿ-ներին կից ևս առկա են հանրային զուգարաններ, որոնք պարտադիր պայման են հանդիսանում ԱԳԼՃԿ-ների համար և առանց որի ԱԳԼՃԿ-ները թույլտվություն (կամ լիցենզիա) չեն ստանա իրենց գործունեության համար:

Համաձայն մարզերից ստացված պատասխանների ՀՀ միջպետական և հանրապետական ավտոճանապարհների տեղակայված է մոտավորապես 216 ԱԳԼՃԿ, որոնց կից առկա են հանրային զուգարաններ:

Սակայն այդ ԱԳԼՃԿ-ներին կից գործող հանրային զուգարարնները չեն բավարարում որոշակի պահանջների, որոնք անհրաժեշտ են տուրիզմի զարգացման տեսանկյունից: Համաձայն ԱԳԼՃԿ-ների լիցենզաների 2015 թվականի ապրիլի 9-ից հետո կառուցված շուրջ 18 ԱԳԼՃԿ-ներին կից զուգարանների նկատմամբ կատարվել է պահանջների խստացում:

Նոր կառուցվող հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերի ճարտարապետաշինարարական նախագծերում սանհանգույցները պետք է բավարարեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) շինարարական նորմերի 5.7-րդ կետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2014 շինարարական նորմերի 308-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին:

Վերը նշված նորմերի պահանջներին չհամապատասխանող սանիտարական հանգույցներ ունեցող օբյեկտներն ըստ անհրաժեշտության պետք է վերակառուցվեն և համապատասխանեցվեն գործող նորմերին:

Ինչ վերաբերում է տիպարային նախագծերով կառուցված առանձին կառույցների տեսքով զուգարանների տեղադրման հարցին, Քաղաքաշինության կոմիտեն ձեռնարկել է համապատասխան ուղեցույցի մշակման աշխատանքներ:

Այժմն ուսումնասիրվում է մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների համապատասխանությունը «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 16.04.2009թ-ի N 06-Ն հրամանով ամրագրված պահանջներին:

ՀՀ մարզերում Սևանա լճից լրացուցիչ ջրառի իրականացման ծավալներ և դրանց արդյունավետ օգտագործում- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակիցները ձևավորված աշխատանքային խմբի շրջանակներում սեպտեմբեր ամսվա ընթացքում այցելություններ են իրականացրել Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի ՋՕԸ-եր՝ ՀՀ մարզերում Սևանա լճից լրացուցիչ ջրառի իրականացման ծավալների և դրանց արդյունավետ օգտագործման գործընթացը դաշտային պայմաններում ուսումնասիրելու նպատակով: Այցելությունների ընթացքում հաշվետվություններ են կազմվել և ներկայացվել փոխվարչապետի աշխատակազմին:

Վարչապետի հանձնարարականով նախարար Սուրեն Պապիկյանը պարբերաբար այցելում է ՀՀ տարածքում գտնվող ջրամբարներ՝ ՀՀ ջրային ռեսուրսների հետագա օգտագործման արդյունավետ ուղիներ գտնելու նպատակով: Մինչ օրս նախարարն այցելել է Արագածոտնի և Կոտայքի մարզի մի շարք ջրամբարներ, որոնց թվում Ապարան, Մարմարիկ և Սևաբերդ ,Գիլանի ջրամբարներ:

ՀՀ Անկախության 27-ամյակ- Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառումների շրջանակում մշակվել է մարզերում անցկացվելիք միջոցառումների ծրագիր, որի շրջանակում սեպտեմբերի 21-ին մարզերում կիրականացվեն տոնական միջոցառումներ և տոնական հրավառություն: Սեպտեմբերի 21-ին Հանրապետության հրապարակում նախատեսված տոնական միջոցառմանը ներկայացված կլինեն նաև մարզերը՝ իրենց տաղավարներով: Տաղավարները կարտացոլեն յուրաքանչյուր մարզի մշակութային առանձնահատկությունները:

Նորարարական ծրագրեր

Ներդրումային օնլայն տեղեկատվական հարթակ- ՀՀ մարզերում տնտեսական ակտիվությունը խթանելու նպատակով միջոցներ է ձեռնարկվում համայնքներում առկա մասնավոր ներդրողներին պետական աջակցության ցուցաբերման գործընթացի ուղությամբ:

- նախատեսում է հանրապետության համաչափ տարածքային զարգացման, տնտեսության կայունության և հետագա տնտեսական աճի ապահովման նպատակով ստեղծել բարենպաստ միջավայր՝ ներդնելով էլեկտրոնային հարթակ, որը օն-լայն ռեժիմով կապ կապահովի հանրապետության մարզերում և համայնքներում առկա գործարարների, սկսնակների և Հայաստանում ու Հայաստանից դուրս առկա՝ հանրապետությունում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցող կազմակերպությունների և անձանց միջև: Հարթակը կապահովվի ներդրումների համար անհրաժեշտ ընդարձակ տեղեկատվություն՝ ըստ համայնքների, տարածաշրջանների, ինչը հնարավորություն կընձեռնի հարապետության տարածքներում առկա հողատարածքները, շինությունները ըստ նշանակության, համայնքներում առկա ռեսուրսները հասանելի դարձնել պոտենցիալ ներդրողի համար:

Ներկայումս ավարտին են մոտենում ծրագրային ապահովման և հարթակի կառուցվածքի ներդրման աշխատանքները:

- Նախարարությունը նախաձեռնել է տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի պետական աջակցության տրամադրման գործընթացը:

ՀՀ 2019 պետական բյուջեից նախատեսվում է միջոցներ հատկացնել ներդրումային ծրագրերի վարկային տոկսների մասնակի սուբսիդավորմանը՝ վարկային տոկոսադրույքները տարեկան առավելագույնը վեց տոկոսի չափով:

Համայնքային պաշտոնների և ծառայողների տվյալների կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի վերագործարկում- Համակարգը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում համայնքային պաշտոնների և այդ պաշտոններում աշխատողների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և մշակման համար: Այն տեղեկատվական-վերլուծական ավտոմատացված համակարգ է, որը նպատակ ունի բարելավել համայնքային ծառայության հարցերի վարչությունում աշխատանքային գործընթացների որակը՝ կրճատելով տեղեկատվության ստացման ժամանակահատվածը: Համակարգը հնարավորություն

կտա նաև ստանալ համայնքային պաշտոններում ծառայող անձանց տեղափոխումները մի պաշտոնից մյուսը, պաշտոններից ազատված լինելու մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պաշտոններում գործող անձանց վերաբերյալ տվյալների փոփոխությունները: Ներկայումս աշխատանքներ են տարվում ծրագրի վերագործարկման ուղղությամբ:

Համայնքային անձնագրեր– համայնքային անձնագրերի առցանց հարթակն արտացոլելու է համայնքի ընդհանուր պատկերը՝ բնակլիմայական պայմանները, ժողովրդագրական պատկերը, համայնքում առկա ռեսուրսը և զարգացման հնարավորությունները

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթաց- ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով շարունակվում է համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացը՝ նպատակաուղղված ՀՀ համայնքների ճանապարհների, այգիների, հրապարակների կառուցմանն ու վերանորոգմանը, էներգախնայող լուսավորության անցկացմանը, հանրային և համայնքային շենքերի վերանորոգմանը, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցմանն ու վերանորոգմանը և այլն:

Մինչ այժմ հավանության են արժանացել համայնքների կողմից ներկայացված թվով 153 ծրագիր, որից 70-ը՝ 2018 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 22-ին կայացած միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: 153 ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 5,798 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորման չափը՝ 2,446 մլրդ ՀՀ դրամ, համայնքների համաֆինանսավորման չափը՝ 3,053 մլրդ ՀՀ դրամ, մասնավոր հատվածի ներդրման չափը՝ 298,3 մլն ՀՀ դրամ:

Եվս 41 ծրագիր ներկայացվել է միջգերատեսչական հանձնաժողովի անդամների քննարկմանը՝ 1,868 մլրդ ՀՀ դրա ընդհանուր արժեքով, որից պետական բյուջեի համաֆինանսավորման չափը՝ 779.6 մլն ՀՀ դրամ:

Կառավարության որոշմամբ հաստատվել է մրցութային գործընթացի արդյունքներով հավանության արժանացած 25 ծրագրերի համար ՀՀ պետական բյուջեից 278,732 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորման տրամադրման մասին որոշումը և կառավարության հաստատմանն է ներկայացվել նաև հավանության արժանացած ևս 34 ծրագրերի համար ՀՀ պետական բյուջեից 424,835 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորման տրամադրման մասին Կառավարության որոշման նախագիծը:

Հաշվի առնելով, որ մրցույթների արդյունքներով ծրագրերի արժեքները նվազում են 15-20 տոկոսով, ապա հաստատված 153 և դեռևս չհաստատված մոտ 60 ծրագրերի համաֆինանսավորման չափը այս տարի խոշորացված հաշվարկներով կկազմի մոտ 2.7 մլրդ ՀՀ դրամ:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ- Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով մշակվել և շրջանառության մեջ են գտնվում ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծեր, որոնցով նախատեսվում է շուրջ 3,7 մլրդ դրամ հատկացնել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ շուրջ 200 ծրագրի իրականացման նպատակով, շուրջ 350 մլն դրամ՝ ՀՀ մարզպետարաններին և համայքներին՝ շուրջ 25 ծրագրի իրականացման նպատակով:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր- Սեյսմիկ անվատանգության բարելավման ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի /այսուհետ՝ բանկ/ միջև կնքված վարկային պայմանագրի հիման վրա: Ծրագիրը սկսվել է 2015 թ,. և նախատեսված է ավարտել այն 2023 թ-ին: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 107 մլն դոլար, որից բանկի վարկային միջոցները կազմում են 88,5 մլն դոլար, իսկ պետական համաֆինանսավորումը 18,5 մլն դոլար Նախատեսվում է հանրապետությունում առավել վտանգավոր 46 դպրոցները ամրացնել կամ նորը կառուցել: Դպրոցների 1/3-րդը ընտրվել է Երևան քաղաքից՝ նկատի ունենալով, որ Երևանում է սովորում ՀՀ աշակերտների 1/3-րդը Ծրագրի հիմնական և առանցքային ցուցանիշը հանդիսանում է առնվազն 18900 աշակերտի անվտանգ կրթական պայմանների ապահովվումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հանրապետությունում առավել վտանգավոր 46 դպրոցները ամրացնել կամ նորը կառուցել: Դպրոցների 1/3-րդը ընտրվել է Երևան քաղաքից նկատի ունենալով, որ Երևանում է սովորում ՀՀ աշակերտների 1/3-րդը: Ներկայումս հաստատված է 20 դպրոցների ցանկ՝ որից 14-ը Երևանում է: Ներկայումս շինարարություն է իրականացվում թվով 6 դպրոցներում:

Հաստատված 20 դպրոցներից 5 դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվել են և գտնվում են փորձաքննության փուլում /Երևանի թիվ 6, 18 և 51 դպրոցներ, Հերացու անվան ավագ դպրոց, Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիր/:

Ծրագրի շրջանակներում առավելագույն սեյսմիկ խոցելիություն ունեցող մյուս 26 դպրոցների ցանկը հաստատելու և ընթացիկ աշխատանքները մշտադիտարկելու նպատակով ՀՀ ՏԿԶ նախարարի 09.07.2018թ. թիվ 193-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների, Կթրության և գիտության, Քաղաքաշինության կոմիտեի, Տարածքային զարգացման հիմնադրամի համապատասխան մասնագետների ընդգրկմամբ: Ներկայումս ընթանում են աշխատանքային խմբի կողմից ՀՀ ողջ տարածքում առավելագույն խոցելի 26 դպրոցների ընտրության գործընթացը:

Ներկայումս շինարարություն է իրականացվում թվով 6 դպրոցներում: Վանաձորի թիվ 5 հիմնական դպրոցում, Երևանի թիվ 135 և 153 հիմնական դպրոցներում, Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում, Նոր Խարբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցում և Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Եղեգնաձորի դպրոցում շինարարությունը կասեցվել է 2017 թվականի նոյեմբերին՝ հողագործության ժամանակ հայտնաբերված հնագիտական գտածոների պատճառով:

«Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր- ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել Գյումրի համայնքի թվով տաս փողոց և արդիականացվնել քաղաքի արտաքին լուսավորության ցանցն ամբողջությամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը **23.5 մլն. Եվրո** է, որից **7.3 մլն.** եվրոն տրամադրվել է որպես համաֆինանսավորման դրամաշնորհ, 1.6 մլն. եվրոն տեխնիկական համագործակցության դրամաշնորհ, իսկ մնացած **14.6 մլն. եվրոն որպես վարկ**:

Ներկայումս ճանապարհաշինարարական աշխատանքներ են տարվում քաղաքի Կոմիտաս փողոցում:

Չարենցի, Վարպետաց, Աբովյան և Ղորգանյան փողոցների հիմնանորգման աշխատնքներ իրականացնելու համար հայտարարված մրցույթն ավարտվել է և արդյունքները ներկայացվել են ՎԶԵԲ-ին՝ մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության հետ պայմանագիր կնքելու նպատակով:

Երևանյան Խճուղի և Մուշ-2 թաղամասը կապող ճանապարհի հիմնանորոգման, ինչպես նաև Գ.Նժդեհ, Տ.Մեծ Սայաթ-Նովա և Հայուհու հրապարակի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար մրցույթը հայտարարվել է և ներկայումս ընթանում են գնահատման աշխատանքները:

Միաժամանակ, տեխնիկական համագործակցության դրամաշնորհի հաշվին ներկայումս խորհրդատվական ընկերության կողմից մշակվում է Գյումրու ավտոկայանատեղերի կազմակերպման ռազմավարական ու գործողությունների ծրագիրը:

Միաժամանակ միջոցներ են ձեռնարկվել ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման և մշտադիտարկման ուղությամբ: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը համակարգում է ծրագրի գործընթացները:

Աղբահանություն- Ներկայումս շարունակվում են աղբահանության բնագավառում ահմանված տնտեսական ցուցանիշների կատարման վերահսկողության, ինչպես նաև շեղումների դեպքում օպերատիվ արձագանքման աշխատանքները, այդ թվում աղբահանության և սանիտարական մաքրման եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունների վերլուծությունների իրականացումը, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների իրական քանակները և գործունեության հասցեները բացահայտելու և վերջիններիս հետ աղբահանության պայմանագրերի կնքման գործընթացները:

Դրա հետ մեկտեղ, միջոցներ են ձեռնարկվում պետական ֆինանսական աջակցություն պահանջող, փակման և բարեկարգման ենթակա աղբանոցների և աղբավայրերի աշխատանքների իրականացման մասով համայնքներին աջակցություն ցուցաբեելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ առաջարկվում է 2019-2021թթ ՄԺԾԾ ֆինանսական հայտերում ներառել այդ աշխատանքների իրականացման ծախսերը /շուրջ 90 աղբանոցների փակման համար՝ մոտ 770,0 մլն ՀՀ դրամ/:

Աղբի վերամշակմանն ուղղված քայլեր- Միջոցներ են ձեռնարկվում հանրապետությունում թափոնների վերամշակման ռազմավարական ուղղությամբ:

Այդ կապակցությամբ քննարկվում են շվեդական, դանիական, չեխական, ամերիկյան կազմակերպությունների հետ թափոնների վերամշակման, այդ թվում էլ.էներգիայի արտադրության գործարանների տեղադրման ուղղությամբ: Ներկայումս շահագիրգիռ պետական գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ քննարկվում են վերամշակման գործրածարրների տեխնիկական և հանրապետությունում դրանց կիրառելիության հարցերը:

«Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարում» ծրագիր- Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված համաձայնագրի համաձայն՝ իրականացման փուլում է գտնվում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ համապատասխան չափանիշների ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայր և ներդնել աղբահանության արդյունավետ համակարգ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն 11,0 մլն Եվրո է, որից 5,5 մլն. եվրոն հանիսանում է վարկային միջոց, 5,5 մլն. եվրոն՝ դրամաշնորհ: Վերջինիս 3.5 մլն-ը տրամադրվում է Եվրոպական հարևանության ներդրումային հիմնադրամի կողմից (NIF), իսկ 2,0 մլն.-ը՝ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերության ծրագրից (E5P): Բանկի կողմից հատկացվել է 1.600.000 դրամ դրամաշնորհ՝ խորհրդատվական ծառայությունների համար: Վարկի մարման ժամկետը 15 տարի է, տոկոսադրույքը՝ լողացող, արտոնյալ ժամկետը՝ 3 տարի: Վարկը կսպասարկվի համայնքների կողմից: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված աղբահանության սակագների շրջանակներում բարելավել բնակչության համար աղբահանության սպասարկման որակը: Ծրագրի արդյունքում կստեղծվի նաև տասնյակ աշխատատեղեր:

Ծրագրի շրջանակներում երկու մարզերի քաղաքային (թվով 12) և գյուղական համայնքներում, կոշտ կենցաղային թափոնների հավաքման և հեռացման պատշաճ ծառայությունների մատուցման և նոր սանիտարական աղբավայրի կառուցման ու շահագործման նպատակով նախատեսվում է՝ Հրազդան համայնքում ԵՄ չափանիշներին համապատասխան նոր աղբավայրի կառուցում (ներառյալ ենթակառուցվածքները, շինություններն ու կառույցները),

- 2 փոխաբեռնման կայանների կառուցում (Աբովյան և Մարտունի),
- թափոնների հավաքման բեռնատարների, թափոնների համար կոնտեյներների/արկղների ձեռք բերում,
- աղբավայրի շահագործման աշխատանքների համար մասնագիտացված սարքավորումների ձեռք բերում, թափոնների հավաքման նոր կետերի տեղադրում:

Ներկայումս ավարտական փուլին է մոտեցել աղբավայրի կառուցման մրցույթի նախավորակավորման փուլը: Հայտ են ներկայացրել 8 կազմակերպություններ՝ 1 հայկական, 2՝ հունական, 1՝ իրանական, 1՝ թուրքական, 2՝ լիբանական, 1՝ ֆրանսիա-սլովենական: Ներկայումս ուսումնասիրվում են պարզաբանումներ ներկայացված փաստաթղթերը, որից հետո պետք է հրավիրվի հանձնաժողովի նիստը՝

նախա-որակավորված հայտատուների վերջնական ցանկը կազմելու համար, որից հետո հայտատուներին կուղարկվեն գնային առաջարկներ ներկայացնելու պահանջ:

Նախատեսվում է աղբավայրի շինարարությունը սկսել 2019 թվականի գարնանը, հաշվի առնելով աղբավայրի կառուցման ընթացքում կլիմայական պահանջները, իսկ ծրագիրը նախատեսվում է ավարտել 2020 թվականի կեսին:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ PRDP

ԵՄ-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվում են 8 տարածաշրջանային զարգացման պիլոտային ծրագրեր:

1. Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը
2. Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում
3. Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես հիմնական նախապայման տեղական / տարածաշրջանային տնտեսական զարգացման համար
4. Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում
5. Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն
6. ՓՄՁ մրցունակության բարձրացում՝ կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով
7. Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում
8. Ամասիայում բրդյա թելերի և կտորի արտադրություն

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Առանցքային արդյունքների ոլորտները (Ռազմավարական ծրագիր)՝ աճը և զարգացումը ներառական են և կայուն՝ միավորելով արտադրական կարողությունները, որոնք ստեղծում են աշխատատեղեր և բարվոք կենսապայմաններ աղքատների և մեկուսացած խմբերի համար:

- Ծրագրի տևողությունը՝ 2015-2020
- Ծրագրի բյուջեն՝ 5,024,988.70 ԱՄՆ դոլար
- Դոնոր՝ Ռուսաստանի Դաշնության կառավարություն
- Իրականացնող ազգային գործընկեր՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Ծրագրի արդյունքները առ 18/09/2018

- 35 համայնքներ
- 86 ջերմոց
- 19 փոքր արտադրամասեր (9 գինու, 8 չրի, 1 հացի, 1 կար ու ձևի)
- 40,1 հա նոր պտղատու այգիներ

- 2 հավաքման կետեր
- 3 գյուղ. մեխանիզացիայի հավաքակայաններ
- 1 բանջարեղենի սածիլների մասնագիտացված ջերմոց
- 3 համայնքային ԼԱԴ լուսավորություն
- 2 համայնքային ենթակառուցվածքների վերականգնում (մշակույթի տուն, դպրոցական ճաշարաններ)
- 34.4 հա կաթիլային ոռոգման համակարգեր
- 2 ոռոգման ջրագծեր

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների կիրառման արդյունքում ի հայտ եկած խնդիրների օրենսդրական կարգավորման համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել բնագավառի իրավական ակտերի փաթեթները:

Շարունակվել են համայնքների միավորման առաջին փուլի **18 համայնքների ներդրումային ծրագրերը**, որոնք իրականացվում են տարածքային զարգացման հիմնադրամի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ և Շվեյցարական զարգացման գործակալության ֆինանսական օժանդակությամբ: Աշոցք, Ուրցաձոր, Գորայք, Ջերմուկ, Զառիթափ, Տեղ, Կողբ, Նոյեմբերյան և Այրում (թվով **9** համայնք, **61** բնակավայր) միավորված բազմաբնակավայր-համայնքներին տրամադրվել է **36** միավոր տեխնիկա (ավտոգրեյդերներ, հողհարթեցնող տապաններ, տրակտորներ, խոտհնձիչներ, բեռնատար ինքնաթափեր, հացահատիկային կոմբայններ և այլն):

Մեկնարկել և ընթացքի մեջ են Տարածքային զարգացման հիմնադրամի Սոցիալական ներդրումների և տեղական զրաագացման ծրագրի 2-րդ բաղադրիչի շրջանակներում 2017թ.-ին խոշորացված **34** համայնքներից **25**-ում /**278 բնակավայր**/ ներդրումային ծրագրերը: ՀՀ-ում գործող միջազգային կառույցների խորհրդատվական աջակցության շրջանակներում 52 միավորված և խոշոր համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչների, համայնքային ծառայողների և տնտեսական պատասխանատուների համար իրականացվել և ներկայումս ընթացքի մեջ են մի շարք մասնագիտական դասընթացներ, սեմինարներ և աշխատանքային քննարկումներ:

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ) են ներդրվել թվով **10** միավորված համայնքներում (ՀԿՏՀ ներդրված է հանրապետության **502 համայնքներից** մոտ **400-ում**): Համակարգերն հնարավորություն են տալիս համայնքային վարչական ծառայություններն հավասարապես հասանելի դարձնել համայնքի կենտրոնում և բնակավայրերում: Ընդհանուր առմամբ, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նախաձեռնությամբ ստեղծված Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրված է հանրապետության **502** համայնքներից մոտ **400**-ում: Այս համակարգի շնորհիվ ՏԻՄ-երն հնարավորություն են ստանում էլեկտրոնային եղանակով իրականացնելու իրենց

հիմնական գործառույթները: Մասնավորապես, ՀԿՏՀ-ի միջոցով էլ. փաստաթղթաշարժ են իրականացնում ավելի քան **300** համայնքներ, իսկ ավելի քան **270** համայնքներում այս համակարգը հանդիսանում է նաև համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայք:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են հիմնվել Ստեփանավան, Ջրվեժ, Կողբ, Օձուն և Արենի միավորված բազմաբնակավայր համայնքներում: ՔՍԳ-ներ են գործում հանրապետության **33** համայնքապետարաններում, որոնցից 23-ը՝ միավորված համայնքների վարչական կենտրոններում: Մինչև տարեվերջ նախատեսված է միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ևս **7** նման գրասենյակների հիմնում Տեղ, Անի, Գլաձոր, Արագածավան, Քաջարան, Ախթալա, Բերդ միավորված համայնքներում, ինչպես նաև գործող ՔՍԳ-ներից **4**-ի արդիականացում Կապան, Սիսիան, Չարենցավան և Եղվարդ միավորված համայնքներում:

Ավագանու նիստերը և հանրային նշանակության այլ միջոցառումներն առցանց հեռարձակվում են **37** համայնքներում, այդ թվում՝ միավորված համայնքներից՝ **19**-ում: